

նրացնելով, շնորհակալութիւն յայտնեց Հայոց Պատրիարքին՝ առիթ տուած ըլլալուն այս այցելութեան համար, որ խնդութեամբ կընու զիրենք, իրեն նշանակ քրիստոնէական սիրոյ, փափագ յայտնեց որ այս սովորութիւն յաջորդ տարիներուն մէջ ալ շարունակուի. Հայ. Եկեղեցիին համար իր ջերմ համակրանքը շեշտեց, և իր հետևորդներուն վրայ Ս. Պատրիարք Հօր օրհնութիւնը խնդրեց, Առանձին խօսակցութիւնները շարունակուեցան, և երկու Պատրիարքները պահ մը ևս տեսակցելէ ետքը, Տ. Առաքանդիանոս պատրիարք ելաւ, կրկին և կրկին շնորհակալութիւն յայտնելով իրենց եղած պատիւներուն համար, առաջիկայ տարւոյ Ս. Ծննդեան և Զատիկի տօներուն ժամագիր ըլլալով, և երկու Պատրիարքները բաժնուեցան երիցս ողջագործելով զիրար, Մետրապօլիտները Ս. Պատրիարք Հօր խոնարհութիւն ըրին, յոյն եփէնտիները Ն. Սրբազնութեան աջն համբուրեցին, և Ս. Պատրիարքն անոնց աջքերէն համբուրեց, և նոյն թափորով յոյն Պատրիարքն առաջնորդուեցաւ Մայր եկեղեցի, Զանգաքները կհնչէին, և Ս. Պատրիարք Հայրն իր սենեկին պատուահանէ կդիտէր, Կենդրոնական տաճարը, բոլոր քահանայն և խորանին բոլոր մոմերը վառած, լոյսերու մէջ ողորուած էր, և բազմութիւնն այնքան էր, որ դժուարաւ ծամբայ կրացուէր թափորին, Դպրաց դասն «Հրաշափառ» շարականով դիմաւորեց յոյն Պատրիարքն, որ մետրապօլիտներուն հետ խորանին մօտենալով համբուրեց Աւետարանը, սեղանին վրայ դրուած սկիհին ծածկոյթն և խաչն, և բազմեցաւ սեղանին առջև դրուած Պատրիարքական աթոռին վրայ, Հարականներուն լմնալէն ետքը, Ն. Ամենապատուութիւն առաջ գալով, իր ձեռքը բռնած թղթի մը վրայէն, զօրաւոր և անոյշ ձայնով մը, յունարէն ընտիր առգանութեամբ մը, կարգաց հետևեալ ծառն ու օրհնութիւնը.

ՃԱՌ ՅԱՅՆ ՊԱՏՐԻԱՐԷԻՆ.

«Միեկեալ զաւակիւնք մեր ի Քրիստոս. — Փոխադարձ այցելութեանց, ողջոյններու և շնորհաւորութեանց նոր պատեհութիւն կհայթայթէ մեզ աստուածաւոր յօժարութիւնը Ն. Բարձր Սրբազնութեան Պատրիարքին ձերոյ և ի Քրիստոս յոյժ սիրեցեալ եղբոր մերոյ Տ. Տ. Մաղաքիայի. — Քրիստոնէութեան տանից ծայրագոյնն՝ որ է Յարութեան Տեառն մերոյ, պարտ էր որ շանցներ առանց պարգեւելու մեզ, երկուց ժողովրդոցս, որք այնչափ սերտ կապակցութեամբ միացեալ եմք ի հաւատոս, եկեղեցականապէս առաւել ևս ամրանալու օրհնութիւնն, աղօթից և բարի յուսոյ նուիրական բանից փոխանակութիւնն առ միմեանս, վասն կատարելագոյն եղբայրակցութեան երկուց Եկեղեցեաց:— Այս ոգւով Ն. Բարձր Սրբազնութիւն բարեհաճեցաւ նուիրագոր-

ծել այս տարի երկուստեք բաղձացեալ կարգադրութիւնն, որով և մեր Ն. Բարձր Սրբազնութիւնն և պատկառելի հետևորդքն նորա ԳԸ. օր պատուասիրելու և մեր եղբայրական մտերիմ սիրով ընդգրկելու բարեբախտութիւնն ունեցանք, Իսկ այժմ, բացառիկ պատիւներով մեծարուելէ ետքը Ն. Բարձր Սրբազնութեան և շուրջ նորա կղերականաց և պատուական աշխարհականաց կողմէն, կգտնուինք ձեզ մօտ այս նուիրական տաճարին մէջ, բոլորով սրտիւ օրհնելու և Ս. Եկեղեցւոյ Գլխէն և քրիստոնէական հաւատոյ Հիմնադրէն ամէն բարիք հայցելու վասն ձեր ամենեցուն. — Ի մեռելոց Յարուցեալ Տեառն Մերոյ շնորհքը զօրացունէ Հայ. Ս. Եկեղեցւոյն բարեպաշտ զաւակներն մեր, ի գործել զամենայն գործս բարիս. դարմանէ մարգկային տկարութիւնքն նոցա, և բարձրացունելով զայնս հողայիններէ՝ պարգեւէ զամենայն ուրախութիւն և առողջութիւն և ալ աշխարհային բարիք, Իսկ երկու ամենահին եկեղեցիները պահպանելով՝ պատրաստէ ի վերուստ կրօնական սուրբ և խաղաղ կենօք կատարեալ եղբայրութիւն և միութիւն ի Քրիստոս Աստուած մեր, որուն վայել է ամենայն փառք և երկրպագութիւն յաւիտեանս, ամէն».

«Բիւզանդիոն»

— Հայտելագրիկի Համալսարանին մէջ Ս. Գրքի բաղգատական ուսման ուսուցչապետ պրօֆեսոր Մէրքս համալսարանական արձակուրդէ օգուտ քաղելով Պոլիս եկած է շարունակելու իր ուսումնասիրութիւնը արեւելեան լեզուներու վրայ.

Հմուտ ուսուցչապետը մարտ 6-ին այցելեց Ս. Պատրիարքին և մէկ ժամու շափ տեսակցեցաւ Ն. Սրբազնութեան հետ.



ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ԹԵՐՈՒԹՈՒՄ ՆՈՒԹԻՒՆ.

Մեղանից մի քանի սերունդ առաջ ոչ որ չէր երազի, թէ կու գայ ժամանակի երբ որ քաղաքակրթեալ աշխարհի կեանքը այնպիսի արգիւքներ պիտի դնէ և սահմաններ դէ ուսման առաջ, որ այնուհետև միայն

սակաւաթիւ քնարեաները հնարաւորութիւն պիտի ունենան անոր վերին բարձրութիւններին հասնել արժանանալու: Առաջ ամենայն խաւերում լսվում էր «ուսում» և «լոյս» յորդորը: ամէն ցանկացողի համար բոլոր ուսումնարանների դռները բաց էին: ուսումը հայրենիք չունէր: համաշխարհային էր: մատչելի էր հարստին և աղքատին: բնիկին և օտարին: այն էլ ախլքան չափով: որքան որ ցանկացողը յօժարութիւն ունենար բարձր ելնելու: Բայց այն ժամանակ կեանքն էլ մերկին նման չէր: այն ժամանակ անսովոր բան չէր: որ Սորբոնից կամ այլ հռչակաւոր համալսարանից ելած դոկտորը՝ աւելը ձեռքին մաքրէր իւր արհեստանոցը: որպէս զի ապրուստ մատակարարող արհեստի պարսպ ժամերից յետոյ՝ նուիրուի իւր սիրած փիլիսոփայութեան: Հիմա պայմանները փոխուել են և նոր նշաններ են երևում:

Ձոր օր: ճի կերեակայէր: թէ բանն այնտեղ պիտի հասնի: որ Գերմանիան: լուսաւորութեան համբաւեալ օրրանը: այսօր հրաման պէտք է հանէ (երէկուայ եկած փոստի նորութիւն ենք հաղորդում): որ իւր բարձրագոյն բազմաբուսական դպրոցներից մէկը (Շարլոտենբուրգի) իսպառ կարծնցնէ օտարազգի ուսանողների յաճախութիւնն այն տեղ: պատճառ բերելով: թէ յաճախող ուսանողների բազմութիւնը այնչափ ստուարացել է: որ դպրոցի դահլիճներն այլ ևս չեն բաւում բոլորին: ուստի հարկը պահանջում է ընտրութիւն անել օտարների և բնիկների մէջ: և զոհել առաջիններին: Գերմանական լրագիրները իրանք խոստովանում են: որ այդպիսի խոստութեան առաջին հետեւանքն այն կը լինի: որ օտար պետութիւններն էլ վրէժը կը հանեն և փոխադարձաբար իրանց բարձրագոյն ուսումնարանների դռները կը փակեն գերմանական հպատակների առաջ: Ուրեմն այն համաշխարհային և համամարդկային լուսաւորութիւնը՝ այսուհետեւ ապրանքների պէս ներքին սահմաններից դուրս չէ կարող գնալ: մինչև որ չմաքրուի մաքսատների մէջ:

Այդ պետութիւնից այն կողմն անցնենք: այն երկիրը: որ պարծնում է: թէ ամբողջ աշխարհին աւետել է հաստատութիւն: եղբայ-

րութիւն և աղատութիւն: այսօր այնտեղ ժողովուրդը բոլոր է բարձրացնում ոչ թէ օտարազգի ուսանողների դէմ: այլ իւր հայրենակիցների դէմ: որոնք պատիւ են համարում միւսների հետ ի միասին արիւն թափել ընդհանուր հայրենեաց համար: և որոնք դէմ բայց և այնպէս աղաղակում են զրգուում: «Կորչի ջհուղը»:

Մի խօսքով: աշխարհքը նեղ է: ամէնի համար ապրելու տեղ չկայ: անգործ հզօրին պիտի հպատակուի: Վայ նորան: ով որ թերութեամբութեամբ է տեղ պատրաստում իւր համար այն աշխարհում: ուր իւր դէմ հանդիսանում են հոգւով: սրտով և մաքով աւելի լաւ սպասարկուածներ:

Ընթերցողի մէջ սկսեալ զարթնում են այսպիսի խորհրդածութիւններ: կարգաւով «Բիւզանդիոն»-ի (թիւ 383) խմբագրականը: Մաքի աշխատաւորները: վերնագրով: Ռըվիլոտէ Ռըվիլե հանգիսից քաղած թուանշաններով հաստատում է մի տխուր վիճակ: որին ենթակայ են այն բարձրագոյն վարժարանների և համալսարանների շրջանաւարտ ուսանողները: որոնք երկրի պէտք ունեցածից աւելի բժիշկներ: փաստաբաններ և այլ ուսումնականներ են հասցնում ամենայն տարի: Փրանսիայի մէջ գտնուող բժիշկների թիւը 12—13,000 է հաշվում: Ենթադրենք որ սքքա ամէնքն էլ կարող լինին համեստ ապրուստ ձարել: նոր շրջանաւարտ բժիշկները խեղճ մնալու հաւանականութեան մէջ են գտնվում: զի տարին միջին հաշուով հազիւ 600 բժիշկ է պակասում Փրանսիայի մէջ: մինչ բժշկական համալսարանները 1,200-ից աւելի նոր դոկտորներ են հասցնում: Դրպարութեանց համալսարանից ամէն տարի հազարաւոր շրջանաւարտներ են ելնում: որոնց կիսից աւելին անգործ է մնում: Գիտութեանց բարձրագոյն վարժարանները հասցնում են տարին 8—900 ձարտարազէտ: մեքենադէտ: երկրաչափ: բնագէտ: որոնք ըստիպում են մի պաշտօն ձեռք ձգելու աշխատիլ այնքան չնչին թոշակով: որ մի լաւ արհեստաւոր-գործաւոր նոցանից աւելի է շահում: . . . Ո՞նչ տեսլ գեղարուեստական փառասիրութեան դժբախտ զոհ եղած երի-

տասարդների կամ հրապարակագրի և կամ քաղաքական կեանքի թեկնածու աղքատ ուսանողների մասին որոնք 5—6 տարի ծակ քսակով կարողիէ Լատենի մէջ կեանքը քաշ-քըշելուց յետոյ իրանց դպրոցական գերագոյն յաղթանակի յաջորդ օրը՝ դէմ առ դէմ դանկում են անթոլութեան հետ: Ահաւասիկ իրողութիւններ և թուանշաններ որ պէտք է մտածելու մղեն Ֆրանսիացի մայրերին որոնք զմայլութեամբ և փառասիրութեամբ երազում են, որ իրենց զաւակները մէկդի ձգեն պապական արօրը կամ ընտանեկան արհեստի գործիները՝ Բազմարուեստեան վարժարանի կամ կենդրոնական վարժապետանոցի շրջանաւարտ դառնալու յուսով: Բայց այս կերպով յաճախ թշուառութեան և յուսահատութեան են մղում նոցա: Մէկ հոգու դէմ, որ կարողանում է իրականացնել ծնողաց երազները, 10 կամ 20 հոգի անյաջող են դուրս գալի... Մտքի աշխատաւորների պէտք եղածից աւելի արտադրուիլն առաջ է բերում բռնուն մրցում, որ աղէտալի է ընդհանրութեան համար... Այսպէս երիտասարդների յուսախաբութիւնը յիշեցնելուց յետոյ յօդուածագիրը քարոզում է, թէ ձեռքի աշխատութիւնը նուազ աղնիւ չէ, քան գրչի կամ լեզուի աշխատութիւնը, թէ մի ազգ գրագէտներով, բանաստեղծներով և բարձրագոյն գիտութեանց հետեւողներով միայն չէ՝ որ պահպանում է իւր գոյութիւնը, այլ մանաւանդ այնպիսի աշխատութիւններով, որոնք անմիջապէս արտադրում են ամէն օրուայ հացն և երկրի հարստութիւնը: Վերջացնում է այս խօսքով. «պէտք եղածից աւելի ունինք գիտութեան պսակաւորները, բայց ստոյգ գիտուններ չունինք պէտք եղածին չափ»:

Այս աղէտը միայն Ֆրանսիայի աղէտ չէ, անոր ծանրութեան տակ ճնշվում է ամբողջ Եւրոպան: Համայն քաղաքակրթութեան աշխարհը «Բիւզանդիոն»-ը ապացոյց է, որ նոյն թշուառութիւնը մեր տաճկահայոց եղբարցն էլ տանջում է. իսկ մենք միթէ ազատ ենք այդ ճիւղից: Բազուն և Թիֆլիսը կարող են վկայ լինել, թէ մենք որքան բազմութեամբ անգործ գիտութեան պսակաւորներ ունինք, որոնք միշտ նախանձով են նայում փոքրա-

թիւ բախտաւորներին, որպէս զի մի կերպ նոցա հեռացնեն պաշտօններից, նոցա տեղը բռնեն և նոցա երջանկութեան հասնին: Այս արդէն ոչ թէ հոգեկան գերազանցութեան ազնիւ մրցումն է, այլ մի կտոր հացի կռիւ, որ ոչ ոք չի խղճում ուրիշի բերանից խլել, մինչդեռ աշխարհը լայն-ընդարձակ անդաստան է, որ ի զուր սպասում է քաջ մշակների: Մենք մաքի մշակներ ունինք, բայց մեր երկիրը խոպան է մնում, միթէ սա Փրանսիայի աղէտ է, թէ մի ուրիշ ցաւ է:

Այս մասին երբեմնակի մեր մամուլն էլ խօսում է: Ռըվիլ տէ Ռըվիլ հանդիսի յօդուածի առթիւ Մշակն էլ իւր գիտողութիւններն արեց: 1896 թ. «Արարատ»-ի դեկտեմբերի համարում տպագրուել է («Ազատ պարապմունքներ և արհեստներ») Մոնպելիէի համալսարանական ծառը, թէ միակողմանի մտաւոր կրթութիւնը ինչպիսի պատառաբոյծեր է ստեղծում, որոնք պատուհաս են դառնում և՛ իրանց անձի և՛ հայրենեաց համար: Սակայն պարբերական թերթերի յօդուածները՝ տեղի սղութեան պատճառով լոկ միայն մատնացոյց կարող են անել չարիքի խնկութիւնը, հնարաւորութիւն չունենալով չարիքի բոլոր պայմանները մի երկու էջերում՝ կատարելապէս ներկայացնել, Նթէ անյաջող կրթութիւնը անպիտան պատառաբոյծեր է ըստեղծում, կարծես թէ պատասխանն էլ պատրաստ կունենանք, թէ ուրեմն ինչ պէտք է անել այդ դէպքում: Բայց այդպէս չէ: Ինչպէս որ աղքատ մարդուն չի կարելի խրատել, որ հրաժարուի կեանքից, որովհետեւ կեանքը զրոգութեան է, այլ աւելի պէտք է շարժել նորա բոլոր աստուածատուր ձիրքերի գործունէութիւնը, որ ձգտէ քաջաբար և աղնուութեամբ պատուաւոր տեղ բռնել կեանքում: Այնպէս էլ Ֆրանսիայի չարիքը մեզ չի կարող խրատել, որ ուսումից հրաժարուինք, այլ պէտք է աւելի բարձր հայեցակէտից նայենք խնդրի վերայ և հասկանանք բարդ հանգամանքները: Երեւի թէ ոչ ամենայն դաստիարակութիւն, ոչ ամենայն ուսում, ոչ ամենայն գիտութիւն մշմարիտ է, երեւի թէ մի ձգմարիտ կրթութիւն կայ, որով պիտի երջանկանանայ համայն հասարակութիւնը իւր

բոլոր խաւերում, վերջին երկրագործ-արհեստաւոր-բանուոր դասակարգից սկսած՝ մինչև բարձրագոյն ղեկավարող դասակարգը: Արդ՝ մենք չունինք աւելի համառօտ, աւելի տա-ղանտաւոր և հիմնաւոր գրուածք այդ ճշ-մարտութիւնը հասկացնելու համար: Քան Դիւլեօ-ի «Դաստիարակութիւն և ժառանգա-կանութիւն»-ն որ Ս. Էջմիածնի մայր աթոռի տպարանն է հրատարակել:—Այս կոչումն ա-նելուց յետոյ, հարեանցի տեսնենք, թէ յի-շեալ չարիքը ինչպէս է ձեւանում մեր կեանքի մէջ:

Փրանսիական աւելորդ գիտնականը և մեր աւելորդ գիտնականը անհամեմատելի ա-ւելորդութիւններ են: Մէկը ուրիշ տեղ պի-տանի կարող է դառնալ, իսկ միւսը... Թող աւելորդ Փրանսիական գիտնականը դայ մեր երկիրը. նա անշուշտ այստեղ այնպէս լաւ կը տեղաւորուի, որ նորա առջև մեր հայրե-նակիցը ծծկեր տղայ կերեայ և իւր մտաւոր ու բարոյական փոքրութեամբ տեղի կու տայ: Իսկ մեր գիտնականը չի կարողանայ իւր ապ-րանքը արտասահմանում վաճառել, պարզ այն պատճառով, որ մեր գիտութիւնն ու նոցա գիտութիւնը այլ բաներ են. մեր գիտու-թիւնը մի նախապաշարում մի առասպել մի անգլուխ անոտք ձիւաղ է: որ միայն մեզա-նում գին ունենալու յաջողութիւն է ըս-տանում:

Թէ ինչպէս է տարածուել մեր մէջ այդ նախապաշարումը, այս չէ մեր խնդիրը. մենք ուզում ենք եղած իրողութիւնը ներկայացնել: Բազաւորութեամբ աշխարհը «կեանք» անուն է տալիս միայն ընկերական կեանքին, ուստի և ուսումն ու գիտութիւնն է պահանջում հա-ւասարապէս ընկերութեան ամենայն վիճակի համար, սանդուխի ամենայն աստիճանի հա-մար. նոցա կէկէին, կօշկակար, պարտիզ-պանը, երկրագործը՝ որչափ որ շատ հմուտ-թիւն և արհեստ ունենայ, դարձեալ է և կը կոչուի կէկէի, կօշկակար, պարտիզպան և երկրագործ. իսկ մեզանում այդպիսի անուն-ներ քիչ և անարժան է համարվում: Մենք դոցա կը կոչենք ուսումն առածներ կամ մինչև անգամ գիտուններ (մաստերներ, տեխնիկ-ներ, ագրոնոմներ և այլն). այդ պատճառով

դոցա սկսում են պատուել Բագուի և Թիֆ-լիսի մեղրի շուրջ և երբեք անձամբ չեն եր-թայ մեր գիւղերն ու փոքր քաղաքները՝ ի-րանց մտաւոր զէնքերով իրանց սահմանները քաջարար լայնացնելու համար: այլ կը սպա-սեն, որ հէնց առաջին օրից լաւ եկամուտ խոտտանան իրանց:

Այս աննշան երեւութի մէջ մի մեծ նա-խապաշարում կայ թաղնուած, որ նախ և առաջ հէնց մեր ծնողներն են պաշտում և իրանց օրինակով էլ անուցանում են իրանց զաւակներին: Յոյց տուեցէք մեր ուսումն ա-ռած՝ այսինքն համալսարանական կամ Եւ-րոպա պատած՝ ծնողներից մէկին, ցոյց տուե-ցէք, ասում ենք, դոցանից միայն մէկին: որ ցանկայ իւր որդուն պատրաստել զոր օր-վաճառականի կամ հոգեւորականի ասպարիզի համար... Այս այնքան անկարելի բան է, որ նա լոկ միայն այդպիսի մտածութիւնից դժուել կարող է, ուր ասել թէ ուզենայ ի-րագործել: Նորա համար ընկերական կեանք չկայ, ուր որ վաճառականն ու հոգեւորա-կանը պատուաւոր պաշտօններ են կատա-րում: այլ կայ կեանքի կէտը, կիսի կէտը որի համար որ ստեղծուած է ինքն ու իւր որ-դին: Հօր հայեացքը կեանքի մասին կաթիլ կաթիլ ծծվում է և հալվում է որդու ա-կանջի և ուղեղի մէջ, ուստի և սա էլ զը-նում է գիմնադրոն այն դադափարով, թէ ուսումը կեանքի համար չէ, թէ ինքը այլ կատարային է պատկանում և աւելի բարձր նիւթից է շինուած, քան այլ հողածինները: Սակայն լուսաւորեալ աշխարհում այլ հայ-եացքներ են իշխում մարդկային կոչման մա-սին: Այնտեղ ընկերական կենաց համար ու-սումը, կրթութիւնը, դաստիարակութիւնը կենդանի զօրութիւն է, իսկ մենք այն դարձրել ենք մի անօգուտ կուռք, որին և երկրպագում ենք կռապաշտօրէն: Անգլիայի պարծանք Դադստոն քաղաքագետը իւր որդոց մէջ նկատեց, որ մէկի մէջ վաճառականութեան հալում կայ, իսկ միւսի մէջ՝ հոգեւորականութեան. և նա ամօթ չհամարեց այնպէս խնամել նոցա, որ նոցանից մէկը Անգլիայի պարծանք վաճառա-կան դառնայ, իսկ միւսը՝ Անգլիայի պարծանք հոգեւորական: Արդ արդեօք Եւրոպան է ըն-

Թանուժ ուղիղ ճանապարհով թէ մենք, որ ամէն բան այն տեղից փոխարինելու սէր ունինք:

Ապա նոյն նախապաշարումը մեր որդոց մէջ ածուժ է բարգձում է այլ կերպով, երբ որ նոքա միջին կրթութիւն են ստանում, որ և համապատասխան չափով արմատանում և շարունակվում է մինչև համալսարանական ուսում աւարտելը: Մի ալ առթիւ Մշակի-ը իրաւացի կերպով նկատել է, թէ մեր նոր սերունդը ապականվում է, վաղ է սկսում նիւթապաշտութեան երազներով անանուխ շահախնդիր ոգի ստանալ, իզեալներէն թափուր մնալ, վեհութիւնը արհամարհել և այլն: Եւ այս բոլորը կատարվում է սրբութեան սրբութեանց անուխով, բարձրագոյն ուսման անուխով, ասեալ թէ այդ կուռքին երգուեցնում են, որ գոյութեան կոտի համար սովալուկ վաղրներ բողմացնէ:— Հին ժամանակից ասել են, թէ «մարդը ըսնական արարած է», սխալ է, պէտք է ասել «բանական դառնալու ընդունակ է», այսինքն՝ թէ ինչքան որ շատ բան սովորի այդ դեռ ևս նշան չի լինի, թէ նա ըսնաւոր պիտի դառնայ, եթէ պարտ ու պատշաճ անուն տալ ուզենանք, շատուսու մնութիւնը մինչև իսկ յիմարացնել կարող է: Եւ իրօք մենք ճշդիւ չենք որոշում հոգւոյ ստորին կարողութիւնները բարձր կարողութիւններից, չենք ուզում հաստատել թէ ամէնքն էլ կարենոր են և թէ մէկը միւսի պաշտօն չի կարող կատարել: Բնազգում սովորութիւններական պաճուճանք յիշողութիւն, անգիտակցական մղումն— հոգւոյ այնպիսի յատկութիւններ են, որ աւելի անբան կենդանական են կոչվում և իրաւամբ, բայց թող ուսման մէջ թաթախուած մարդը բնազգումներ չունենայ, սովորութիւններից զերծ լինի, երեւակայութիւնն արհամարհէ, յիշողութեան խորխիս չունենայ, անգիտակցական մեքենայութիւնը լաւ լարուած չունենայ— և նա իւր ուսումներից այնպէս կը ճնշուի, որ ասեալ թէ իւր ուզիւր արձնից լինի զանգուած: Հոգւոյ ամենայն կարողութիւն ունենում է կանոնաւոր ընթացք և հիւանդական վիճակ: Աշակերտը շատ հեշտ է գայթակղվում առջին զննելու հոգւոյ ստորին կոշուած յատ-

կութիւնները, բայց որովհետեւ բնութեան ընթացքը փոխել այնքան էլ հեշտ բան չէ, ուստի մինչդեռ նա երազում է, իրր թէ երկնից ստողեր է վայր բերում և բարձր հրահանգութիւններով է զործում, տակից խկապէս բանում են իւր արհամարհած զօրութիւնները, որով նա աննկատելի կերպով աւելի ընտելանում է վերջինների անտեղի միջամտութեան: Այսպէս մտքի զործողութիւնների մէջ սկսվում է մի այնպիսի խառնաշփոթութիւն, որ զարմանալի չէ, եթէ միտքը շարունակ ուսմամբ փոխանակ բանական դառնալու՝ սկսում է յիմարանալ Ռարիշ խօսքով, մարդն ունի մի բնատուր ձիրք, որ մենք կոչում ենք առողջ դատողութիւն, այս անգին ժառանգութիւնը աշակերտական կեանքում մեծ պատուի չի արժանանում, ուսանողները այս ժառանգութիւնը անխղճարար շուտ են շաւղում, աւելի մեծ դանձ համարելով զբարոցական գիտելիքները, անդրանկութիւնը շիկաթանի հետ են փոխում և այս այսպէս շարունակ գնալով վերջապէս տեսնում ենք այն հանգէսը, որ թէպէտ նոքա զրքերի ու տետրակների իմաստութիւն շատ են ունենում, բայց առողջ դատելու կարողութիւնն այնուհետեւ ընդ միշտ ամուլ մնացած են թողնում: Սկզբում մի մեծ կորուստ չի համարվում առողջ դատողութեան թուլանալ, ուսանողը մխիթարվում է, թէ գիտութիւններ ձեռք կը բերէ և իւր շնչին կորուստը հաղարապատիկ կը վարձատրուի: Սակայն ով որ առողջ դատողութիւնը կորցնում է, նորանից ընդ միշտ խառվում է ճշմարիտ գիտութիւն, այդ վիճակում մարդ կարող է բարձրագոյն ուսում ստանալ, պատկառոր դառնալ, դիպրմներ ձեռք բերել, գիտութեան ստուեր ունենալ, բայց կատարեալ գիտութիւն երբէք չի ունենայ, նա կարող է մի պաշտօն կատարել մեքենայօրէն, բայց ոչ թէ բանաւոր կերպով, իմաստութեամբ, գիտուն հրահանգութեամբ: Սպենսերը մանրամասն վերլուծութեամբ ցոյց է տուել («Генезисъ науки»), թէ առողջ դատողութիւնը և ուսումնական գիտութիւնը էապէս տարբեր բաներ չեն, զանազան մտածողութիւն և զանազան արամորանութիւն չեն, անոնց տարբերութիւնը աստիճանական

է: մէկը անմիջական զգայարանքների տպաւորութիւններով է գործ տեսնում: միւսը միջնորդական զուգորդութիւններով, մէկը գիտելով է ըմբռնում միւսը դատելով է եղբակացում: բայց եթէ առաջին շնորհքը կորչի, երկրորդը երբեք չի դօրանայ: Հէնց որ աշակերտը ինքնուրոյնութիւնը կորցնէ, իսկ մերոնք շատ վաղ են սկսում կորցնել: Հէնց որ ուսման ժամանակ սկսէ կրաւորական դիրք բռնել, այդ արդէն նշան է, որ նորա հոգումէջ սկսուել են վերը նկարագրած շփոթութիւններն և զարգացման ուղիդ ճանապարհից խոտորումը:

Այդպիսին շարունակ դիւթում է մընում այն նախապաշարման տակ, իբր թէ գլխաւոր բանը գիրքն է, տետրակն է, կրաւորական կերպով աշանջի լսելն է, վարժապետի ծամածնեքով հերիքանալն է և այլն. այդպիսիներից կազմվում է մեր յուսահատածների մեծ բանակը: որոնք իրանց թշուառ և կորած են համարում: մինչև որ բարձրագոյն ուսումն ստանալու: համալսարան գնալու շարժանան: որ ի հարկէ շատերին չի վիճակվում և չի կարող վիճակուել: այդպիսիները իրանց մէջ ոյժ և զօրութիւն գտնում չեն: որ զբարթ հոգով և տոկուն կամքով մտնեն ժողովրդեան ամենայն խաւերի մէջ և փոքրիկ ամերիկացու պէս՝ անձամբ ստեղծեն իրանց ծանապարհը, անպատիւ չհամարելով ոչ մի արհեստ կամ պարապմունք, պատրաստ լինելով ամէն տեղ իւրովսանն գործելու: համոզուած լինելով, թէ վիճակը մարդու առաքելութիւններով է աղնուանում: և ոչ թէ վիճակն է բարձրացնում անկոչին: Այդպիսին աստուածային հուր, ինքնակրթութիւն չի դուրս տանում: միշտ մի դայեակի է կարօտ: Եթէ դա ուղենայ վաճառական դառնալ, գրքերից հաշուապահութիւն սովորել չի կարող, այլ մի հաշուապահին պիտի դրամ վրձարէ և նորանից դասեր առնէ. եթէ ուղենայ իւր գիւղում մեղուարոյժ գտնալ, գիրքը դօրան չի օգնի: մէկը պէտք է դայ և ամէն պարագաները ցոյց տայ. եթէ հիւանդանայ, տնային բժշկարանով չի կարող ապաքինանալ, գիրք ուսումնասիրել չգիտէ: Դա հոգեով անդամալոյժ է, բարոյական նեցուկ չունի: իւր ոյժերի վերայ վստահութիւն չունի:

Հիմա մեր պատանու հետ համալսարան գնանք, և տեսնենք, թէ այն տեղ ինչպէս է ձևանում մեր յիշած նախապաշարումը: Այս ժամ շատ բան չունինք աւելացնելու: Ինչ որ միջին կրթութեան համար ասացինք, այն mutatis mutandis (համեմատ և պարտ ու պատշաճ փոփոխութեամբ) այս տեղ էլ զօրութիւն ունի: այս տեղ պսակվում է այն, ինչ որ այն տեղ սկսուել էր: Արդեօք պատանին բարձրագոյն դպրոցներում փոխում և ուղղում է իւր նախկին շեղումը ընթացքը: Այս բանը աւելի լաւ կերեւայ բարձրագոյն ուսման արդիւնքներից: Փոքրիկ Զուլիցերիայի կամ Բելգիայի ամէն մի աւանդել խոստովանում և ճանաչում է իւր իմացական դասի առաջնորդութիւնը. սիրում է գիրք, թատրոն, յայտարարութիւն, նոր գիւտ, մաքրութիւն, մարդավայել կեանք, գիտէ թէ կարիքի ժամանակ ում պէտք է դիմէ խորհրդի և այլն: Բայց ահա 50 կամ 60 տարուց աւելի է, որ մեր մէջ բարձրագոյն ուսումնաւարտների թիւը հեռուցեալէ աւելացել է. ինչ փոփոխութիւններ մտցրեցին նոքա մեր կեանքի մէջ: Նոքա ի հարկէ յաջողութեամբ կատարում են իրանց պաշտօնները—մէկը բժիշկ է, միւսը լեզուաբան է, երրորդը քիմիկոս է, չորրորդը ճարտարագէտ է և այլն: բայց արդեօք նոքա մտցրեցին մեր կեանքի մէջ գիտական ոգի, գեղարուեստի սէր, քաղքերի մեղմութիւն, քարճրագոյն շահեր, գէթ իրանք անձամբ ապրում են այդպիսի ոգով: Ո՛ւր են մեր ուսումնական գործերը, հաստատութիւնները, ճարտարութիւնները, այն դրոշմը, որով երևալի թէ մեր հասարակութեան մէջ էլ քաղաքակրթութեան էական մասը բարգաւաճում է բարձրագոյն իմաստութեան մշակների ձեռքով ու ներդրածութեամբ: Մենք ամէն բան բոժոժի թմրութեան մէջ ունինք, որ չի թեւադրվում լոյս աշխարհ դուրս չի գալիս: Գիտական ոգեով ներշնչուածը չի կարող դատարկ և ամուլ ապրել, նա այնպէս պէտք է աշխատէ և արտադրէ, ինչպէս որ մեղուն մի ներքին մղմամբ միշտ իւր խորիսին է շինում: Մեր հասարակութիւնը շատ լաւ է ապացուցանում, թէ գիտութիւնը այլ բան է, իսկ դիպլոմը՝ այլ: Գ. Ա. Երիցեանը

դիպում չունի՝ բայց մեղուի աշխատութեամբ իւր ընտրած մասը մշակում է, ուրիշները դիպում ունին, բայց քանքարաթագոյց են մնում և չեն նեղվում անդործութիւնից։

Միթէ այս ապացոյց չէ, թէ մեր բարձրագոյն ուսման մէջ էլ մի մեծ նախապաշարում է նստած։ Այո՛, այդտեղ էլ մի նզովք է դրուած։—Դիպումը մեր երիտասարդներին շատ բան է տալիս, բայց ոչ թէ ստեղծողական ոգի, ոչ թէ ծննդական միտք, այս բանով պէտք է բացատրուի մեր մտաւոր անարդասաւորութիւնը, կատարեալ ամուլութիւնը։ Դիտութեան պսակաւորները օրինակով հաստատում են, թէ նոքա շատ բան են սովորել, բայց քիչ են կարողանում գործել։—Սակայն եթէ համադարանից մտաւոր մեծ պաշար բերողը՝ մեր շրջանում ինքնուրոյն գործելու հնար չի գտնում։ Եթէ մեր լեզուաբան-բանասէրը չի փորձում հայոց դպրութեան մէջ Դրիմի, Բուսլակի կամ Բրանդէսի գեր կատարել, բժիշկը չի վստահանում տեղական պայմաններն ուսումնասիրել կամ գէթ հին ղէքիմութիւնը մերկացնել, եթէ բնագէտը օտարներից է իմանում Դիլիջանի բուսականութիւնը կամ Սեանայ ձկների բնութիւնը և այլն, եթէ նոքա չեն զգում իրանց մէջ մեղուի ներքին մղումը—մենք չենք ուզում անիրաւութեամբ պնդել, իբր թէ նոքա ընտել են մասնակցում մեր զարգացման ընդհանուր գործում։

Ընդհակառակ, նոքա սիրում են հրապարակախօսութիւնը ծաղկեցնել, ընթերցանութեան գրքեր տարածել, ուսուցչութիւն անել, բայց արդեօք որքան արդիւնաւորութեամբ։—Լաւ հրահանգուած մտքի առաջին յատկութիւնն այն է, որ նոր պայմաններում ինքնիշխան զօրութեամբ և հեղինակութեամբ գործել կարողանայ։ Հիմա խնդիր է, թէ արդեօք մեր նոր սերունդը իւր թարմ ոյժերով բարձրացնում և ազնուացնում է մեր մամուլի գործունէութիւնը, թէ միամտաբար այդ մամուլի ցանցի մէջ է բռնվում և ստրկի պէս անոր թմրկով է պարում։ Nomina sunt odiosa—մենք կարող ենք անունները հանգիստ թողնել, սակայն միթէ գեղեցիկ տեսարան է ներկայացնում այն մամուլը, ուր թերուսները արեգակ-

ներ են, իսկ բարձր ինտելիգենտները՝ նոցա կամակատար արբանակներ։ Յամենայն դէպս թերուսներին փառք և պարծանք պիտի տանք, որ իրանցից աւելի օժտուածներին ման են ածում քթից քաշելով։ Բայց մի՞թէ ողբալի չէ այդ հռչակուած ինտելիգենցիան, որ աւելի նախանձելի պաշտօն չի կարողանում գտնել։ Ուրեմն այս ասպարիզում մտքի բարձր հրահանգութիւնը ոչ միայն փուչ է հանդիսանում այլ իւր ուժով զօրացնում է հին ֆեսար։

Դանք այժմ ընթերցանութեան գրքերի տարածման։ Արդեօք այս մասում նշմարվում է, թէ գործի գլուխ է կանգնել բարձր իմացականութիւնը։ Խոստովանելով հանգերձ, թէ գրքերի բովանդակութիւնը հեռզհեռ սխում է լաւանար, մենք աւելի այլ հանգամանքի վերայ կուգենայինք ընթերցողի ուշադրութիւնը դարձնել։ Յայտնի է, որ շարունակ և իրաւացի զանգատներ է լսվում մեր գրականական լեզուի մասին, և թէ այդ զանգատները միշտ և միշտ անուշադրութեան են մատնվում։ Այս տեղեղ երևոյթը միայն մեր հասարակութեան մէջ տանելի կարող էր դառնալ, եթէ կօշիկը նեղ է և սղմում է, ոչ ոք այն կօշիկը էլ չի հագնի, իսկ մեր ինտելիգենցիան բնաւ չի ճնշվում անճոռնի լեզուի գործածութիւնից։ Բայց թող մեր ինտելիգենցիան իրօք զարգացած լինէր, իրօք նուրբ ճաշակ ունենար, նորա համար անտանելի կը լինէր այդ գործիքի անպիտանութիւնը և չէր հանգստանայ, մինչև որ չվերացնէր այժմեան անկատարութիւնը։ Նա զոր օր, չէր հանդուրժի, որ իւր բառարանները իրիցփութեանցի և Խուզաբաշեանցի մաշուած ցնցոտիներից կարկատուէին, չէր սպասի, որ իւր քերականութիւնը Այտընեանը կազմէր, կը հոգար ճոխանալ ամէն տեսակ կարեւոր ձեռնարկներով, իսկ ամէնից առաջ համեմատական և զուգընթաց քերականութիւններով, մանաւանդ այն օտար լեզուների քննութեամբ, որոնք աւելի են ազդում մեր լեզուի վերայ, որպէս զի մեր համրակները խրատուին, թէ ինչպէս պիտի կարողանան հայացնել հասարակաց օտարաբանութիւնները և այլն։ * Թեր-

* Վրացի մեղանից աւելի յառաջացեալ են. Դո-

ևս մեզ ասեն, թէ Այսրենանից յետոյ արդէն Պալասանեանը յօրինել է արեւելեան բարբառի քերականութիւնը, և թէ ուրեմն զուր է մեր տրտունջը: Բայց այդպէս աւելի կը հաստատուի մեր այն միտքը, թէ ներքին կոչումը, ինքնուսումնութիւնը, ինքնուրոյնութիւնը միշտ աւելի արդիւնաւոր է հանգիստանում, քան լոկ միայն դիպլոմը, և թէ մեր գիտութեան պսակաւորները՝ անհասկանալի կերպով՝ միշտ տկար են մնում մտաւոր արտադրութեան մէջ. առաջ օրինակ բերեցինք Նրիցեանին, այժմ թող օրինակ լինի Պալասանեանը, որ նոյնպէս դիպլոմ չունէր: Մեծ պարծանք է—տարածել այնպիսի գրքեր, որոնց հետ որ տարածվում է նաև լեզուի բարբառութիւնը:

Վերջապէս տեսնենք մեր բարձր ինտելիգենցիայի ուսուցչական գործունէութիւնը: Ասացինք, թէ ամենայն մասնագէտ, եթէ հրահանգուած միտք ունի, միշտ պիտի կարողանայ այլ մասնագիտութիւնների սահմաններում շատ կամ քիչ հաստատութեամբ միջամտել, մանաւանդ որ շատ անգամ հարկը ստիպում է այդպիսի միջամտութիւն: Հանգուցեալ պրոֆ. Պատկանեանը երբ որ ձեռնարկեց Առաքել պատմագրի այն գլուխը ուսումնասիրել, որ խօսում է պատուականականց՝ մասին, հարկադրուեցաւ սովորել հանքաբանութիւն և քիմիա: որոնք իւր մասնագիտութիւնից սար ու ձորով բաժանուած էին, բայց և այնպէս դժուարութիւնը յաղթեց և հանքաբանական մի ընդարձակ ճառ գրեց՝ իբրև նախաշաւիղ իւր բուն խնդրի ուսումնասիրութեան համար:—Երբ որ մեր համալսարանները գալիս են ուսուցչութիւն անելու, նոյն վիճակի մէջ են լինում. նոցա առաջ բացվում է մի նոր ասպարէզ, հոգեբանական-մանկավարժական ասպարէզ, ուր որ առաջին անգամ պէտք է գործ դնեն իրանց մտաւոր զօրութիւնը: Բնական է, որ նոքա սկզբում սխալներ են գործում և այս պատճառով նոքա դեռ ևս չպէտք է մեղադրուին:

Բայց տարիներ են անցնում, ո՞վ նոցանից ըստեղծել է մի բանական մեթոդ, դասաւանդութեան եղանակ, որ զոհացնէր իրան: Մինչդեռ մենք անգաղար լսում ենք, թէ նոքա կրկին և կրկին չեն կարողանում իրանց ունեցած մեծ ուսումնական պաշարը արդիւնաւոր կացուցանել, չեն կարողանում աշակերտներին կարգին բան սովորեցնել: Ի՞նչպէս պէտք է բացատրուի այսպիսի շարունակ անյաջողութիւնը: Ինչո՞ւ համար տարեցտարի պէտք է տրանջենք, թէ մեր աշակերտները շատ բան չեն սովորում, թէ լաւ թուանըշաններ չեն ստանում, թէ դասատւից դասատուն փոխադրուելու չեն արժանանում, թէ ուսմամբ չեն ոգևորվում, թէ ամենայն բան մեքենարար են կատարում, թէ կորցնում են բանականութիւն կամ բնաւ ձեռք չեն բերում և այլն. բայց երբէք չենք փորձում մեր բռնած ընթացքը խելացի կերպով փոխել, փորձերից օգուտ քաղել և խրատուիլ: Միթէ տարակոյս կարող է լինել, թէ մի մըտաւոր անշնորհքութիւն, մի մտաւոր ծուլութիւն ընդ միշտ կաշկանդում է նախ և առաջ մեր իսկ բանականութիւնը, որ հմայութեան քողից չի կարողանում փարատուիլ և պայծառանալ:

Այս բոլորից երևում է, որ մեր ուսումը՝ և առաւելապէս բարձրագոյն ուսումը՝ սնանկացած է հանդիսանում և եթէ Փրանսիայում ուսումնականների քսմակն է զարհուրեցնում, մենք պէտք է զարհուրէինք մեր ուսումնականների որակից: Մեզ ասում են, թէ հարկ չկայ, որ համալսարանականներից ամէնքը մագիստրոս, դոկտոր, ուսուցչապետ կամ ի պաշտօնէ գիտնական-ուսումնական լինին. բաւական է, որ նոքա իբրև մեր հասարակութեան առաջաւոր անդամներ՝ բարձրացնեն մեր քաղաքակրթութիւնը, ընտելացնեն մեզ հոգեւոր կենաց, իրանց օրինակով սիրեցնել տան բարձր-մտաւորական շահեր: Թող այդպէս լինի, մանաւանդ որ մենք ինքներս առաւելապէս բարձրագոյն հրահանգութեան նշաններ էինք փնտռում. բայց մենք կարծում ենք, թէ դոքա հէնց այդ պաշտօնը լաւ չեն կատարում: Հազարից մի օրինակ բերենք. յայտնի է որ մեզանում

գերաշուշին հրատարակել է «Очерки сравнительной грамматики урз. и рус. языков», որով զգուցանում է, թէ ինչ խիստ արդիւնաւոր կայ ուսաց և վրաց լեզուների մէջ:

եկեղեցական երգեցողութիւնը ի՞նչ անկեալ վիճակի մէջ է, յայտնի է որ միայն Թիֆլիսի վանքը միակ բացառութիւն է կազմում այդ կողմից, ուր որ պ. Էքմալեանի ղեկավարած կանոնաւոր երգեցողութիւնը երաժշտասէր-գեղեցկասէրների համակրութիւն է վայելում: Ահա պ. Էքմալեանը հրատարակել է ձայնագրած պատարագի արարողութիւնը. ի՞նչ էք կարծում, գեղեցկասէր-ճաշակագէտ Աթէնք-Թիֆլիսում քանի՞ օրինակ է վաճառուել այն առաջին և առաջնակարգ արուեստագիտական երկից: Երաժշտական խանութը ձեզ կարող է վկայել, որ ընդ ամէնը վաճառուել է մի օրինակ, իսկ գնողը եղել է ոչ թէ մի ինտելիգէնտ-հայ, այլ մի (իրօք հարցասէր) ծանապարհորդ ֆրանսիացի:—Մի խօսքով, ինչքան էլ որ փորձէք, մեր ոսկին կեղծ է:

Եթէ լաւ մտածենք, մեր վիճակը խիստ ողբալի է, շատ սխալ ճանապարհ ենք ընտրել. մենք տակաւին մտաւորական կեանք չենք սկսել, բայց մեր միտքն արդէն մաշուել, ծիրուել, ներգեւել, սպառուել է (atrophie): Եթէ մեր մտաւոր անդաստանը կորցրել է իւր զօրութիւնը, բեղմնաւորութիւնը, եթէ այն խամացել է, եթէ հողի բարեբերութիւնը պակասել է, արդեօք պէտք չէ՞ հողը հանգստացնել և միջի ցանքսը փոխել, ինչպէս որ խոհեմ երկրագործը վարվում է իւր սպառած հողի հետ (այս հետաքրքրական խնդրի առթով արժէ կարդալ Գիւլեօ-ի «Դաստիարակութիւն և ժառանգականութիւն» գրքի վերջին գլուխը): Մեր զաւակները աւելի քան 12 տարի տաժանական ուսում են առնում, կեանքից օտարանում են, առողջապատութիւնը կորցնում են, մտքի բեղմնաւորութիւն չեն ցուցանում—միթէ այս բոլորը ապացոյց չէ, թէ մեր ուսման տաճարից կենդանի աստուածութիւնը հալածել ենք և մէջը նստեցրել ենք մի կուռք: Միթէ յայտնի չէ, թէ մենք բռնուել ենք մի սոսկալի նախապաշարման մէջ, որի ծանկերից չենք կարողանում ազատուիլ: Մենք հասկացել ենք, որ բարեք կենաց համար հարկաւոր է բնութեան օրինաց համաձայն ապրել. այստեղից եզրակացնում ենք, թէ ուրեմն զիտութիւնների ծանօթութիւնը առաջին և էական

ուսում պիտի լինի, թէ ուրեմն էլ ուրիշ ոչինչ հարկաւոր չէ: Բայց մենք չենք նրկատում, որ ենթադրութիւնն ուղիղ է, իսկ հետեւութիւնը՝ անստոյգ: Կեանքի բարեք պահպանութեան համար՝ բնութիւնը այլ կերպով է հոգացել, քան եթէ մենք չըհոգանք լոկ միայն ուսման միջնորդութեամբ: Եթէ կաթ ծծել կարողանալու համար մանուկը հարկադրուած լինէր նախ ֆիզիքայից սովորել օգի ճնշման օրէնքները, եթէ կերածը մարսել կարողանալու համար՝ ստիպուած լինէր նախ քիմիա ուսումնասիրել, չգիտենք թէ այնուհետեւ նա ի՞նչ յոյսեր պիտի ունենար ապրելու: Եթէ վազել, ոստնել, պարել, նետել սովորելու համար՝ մանուկը ուղեւոր կանխաւ զիտականօրէն քննել մեքենական և կշռական օրէնքները, էլ երբ պէտք է կարողանար այդ արուեստների տէր դառնալ: Այսպէս ևս ի՞նչպէս պիտի կարողանայ մի մայր իւր զաւակին լաւ սնուցանել, խնամել և մեծացնել, եթէ ուրիշ աւելի միջոց չունենայ, բայց եթէ գնաց և վարժապետից կամ գրքերից սովորէ բնախօսութիւն և մանկավարժութիւն. Կանացի ընտանի շնորհքը, երազամտութիւնը, յստակատեսութիւնը մի աստուածապարգև ձիրք է, որ մեր կրթուած օրիորդները աւելի քիչ են գնահատում, քան գրքեր: Դիտութեանց իմաստութիւնը, ուսումնական բանաձևերի անգիր սովորելն ու լեզուով կրկնելը՝ միշտ չի շատացնում մարդու խելքը, բայց շատ անգամ շուտրեցնում և յիմարացնում է: Ժաղրական թերթերը շատ անգամ են նկարել գրքի իմաստութեան պատկերներ: Վերջաբանութեան համար առաջ ենք բերում այդպիսի պատկերներից մէկը. մի մանկահասակ տիկին ուղում է խոհարարուհի ունենալ և նախ քան ընտրութիւն անելը՝ հարցաքննում է ցանկութիւն յայտնողների ֆիզիքական եւ քիմիական տեղեկութիւնները, նա ի հարկէ դրոցում իմացել էր, թէ այդ զիտութիւնները որքան կարեւոր զիտելիքներ են սննդեան կատարելութեան համար: Հարցաքննութեան արդիւնքը չգոհացրեց տիկնոջ, երեւակայի, արտոնջելով ասաց իւր ամուսնուն, երեւակայի ի՞նչ ապուշներ են սոքա, ես հարցնում

եմ թէ ջուրը ջերմութեանն ո՞ր աստիճանին է եւի գալիս: Այս բանը դոքա չգիտեն, իսկ հաւատացնում են, թէ լաւ խոհարարութիւն գիտեն: — Սեղծ տիկիներ «գիտութիւնների» ուսմամբ կորցրել էր «մասաւոր աշքը» և չէր կարողանում փորձով տեսնել խոհարարութեան արհեստը: Թղթերի գիտութիւնը դժուարացրել էր աւելի իրական և կարեւոր ծանօթութիւնների ստացումը. հիմա եթէ տիկիներ ինքն իրան մէնտէ թողնուի կարող ենք երեւակայել թէ իւր փիլիսոփայութիւնից, կաթսանից և ջերմաչափից ինչպիսի յիշատիւթիւններ յառաջ կուգան կերակուրների համի և սննդարարութեան մէջ:

Այսպիսի գէպերի համար Սպէնսերն ասում է. մենք շատ ճշմարտութիւններ գիտենք, որ գիտութիւնից առաջ ենք սովորում: զոր օր. աննեցուկ մարմինը վայր կընկնի, վառած ճրագը կը հանգչի՝ եթէ ջրի մէջ խոթենք: սառոյցը կը հալէ՝ եթէ կրակի մէջ ձգենք, բորբոքած խարոյկից ծուխ կը բարձրանայ: կրակից ջուրը եւի կու գայ՝ ասոնք բոլորը այնպիսի գուշակութիւններ են, որ ազախնն էլ իւր պարզ խելքով ճշդիւ կը գուշակէ, ինչպէս և ուսումնականը: Բայց թէ լուսինը երբ կը խուարի — այս գուշակութիւնը ազախն խելքի բան չէ: — Summa summarum — մենք մեր ստացած ուսմամբ ազախն չափ խելքը կորցնում ենք: Բայց վաղում ենք լուսնի յետեւից: Միթէ նախապաշարում չէ՞ այս յամառութիւնը:

Ս. Մ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Փոքր Ասիայի լեռնակներ. — Միւնիստի մարդագիտական ընկերութեան մէջ դր. Յիմմերերը այդ նիւթի մասին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդել. Ս. Գրոց ազգահամարի (Տնտեսգ. Ժ.) Բանանի որդոց մէջ Հետիտներ (Բետացիք) անուանածները՝ կարեւոր նշանակութիւն ունին Փոքր Ասիայի հնագոյն պատմութեան համար: Մինչև 1500 Ն. Ք. Ծ. Բ. նոքա հաստատուած էին Կապպադոկիայում և վերին Որոնտէսի հովտից գէպ հարաւ

չէին տարածուել, Եգիպտացւոց և Հետիտների գրծագրած պատկերներում միշտ գտնում ենք սեմականներից խիստ որոշուող մի ազգ — անմորուս և յատուկ ձևի մագերով, այն է՝ դոցա մագերն սեմականներից աւելի երկայն են և գլխի վերայ հաւաքած են, ոչ թէ գնտացած, այլ երկայն ճառագայթներով իջած մինչև ուսերը: Զինուած են կովկասեան ազգերի պէս, նոցա քիթը ձգուած է թեթեւակի աղեղնաձև, ճակատը՝ յետ քաշուած: այտերի ոսկրները՝ խոշոր, կրկնակզկը՝ կարճ և բոլորակ, մագի գոյնը՝ խիստ բաց, Լուշանը գտնում է Զէնջիլիլի և Փոքր Ասիայի բոլոր ցեղերի քանդակագործութիւնների մէջ՝ նախնական ժողովրդեան մի տիպ աւելի թխադոյն դէմքերով, քան ինչպէս որ եգիպտական գունաւոր պատկերներումն են նկարուած, և աւելի բնական մագերով, միով բանիւ՝ հայկական ցեղական յատկութիւններով կամ՝ ինչպէս որ Լուշանը անուանում է՝ նախակապադոկեան կամ արմէնօրդ կերպարանքը, Այս նախնական տիպը նոյնութեամբ ճանաչվում է (Հումմէլի նկարագրած) սուսերեան — ալարոգեան տիպի մէջ, որ 4000—3000 տարի Ն. Ք. Բ. ժամանակներից մնացած բարեխոնեան պեղումներում յայտնուեցաւ: 1120 թուականին Ն. Ք. Բ. այլ ևս գոյութիւն չունէր հետիտեան մեծ պետութիւնը, Զէնջիլիլի հոյակապ քանդակագործութեանց մէջ արդէն Լ. դարում սկսվում են երեւալ հին սեմական արձանագործութիւնները: Բարեխոնի, Ասորեստանի, Մարաց և Պարսկաստանի ազգեցութեան սահմանագիծը Փոքր Ասիայում պէտք է համարուի Հալիս գետը, Իսկ գետից այն կողմը Փոքր Ասիայի թերակղզին հաղիւ թէ իւր աւելի քան հազարամեայ գոյութեան միջոցին երբ և իցէ վարչական միութիւն կազմած լինի, այլ միշտ մի մեծ՝ այն ևս ծովապետական՝ իշխանութեան մի մաս է եղել, Յայտնի է, որ 600 թուականներում Վիմրներ և Սկիւթացիք արշաւել են այգտեզ, Սակայն մարդագիտական տեսակէտից Փոքր Ասիայի ամենանշանաւոր ազգն է Հայոց ազգը (որին ասորեստանցիք կոչում են — ուրարտու, ս. Գիրքը՝ արարատ, իրանք անձամբ՝ խալդինի), նոցա պատմութիւնը մեզ ծանօթ է Ասորեստանի և բնիկ բեւեռագործիւններից, Հայաստանի հնագոյն բնակիչները Հետիտներից խիստ տարբեր են իրանց լեզուով, որ պատկանում է ուրալ — ալտայեան լեզուների ընտանիքին, Վիմրների և սկիւթացիների արշաւանքի հետ ի միասին: Ե. դարում Հայաստանի մէջ սրբաբուեցաւ մի նոր հնդկ-դերմանական ազգութիւն, որ ոմանք գաղթած են համարում Թրակիայից և Փոնտիկիայից, իսկ ոմանք՝ Վիլիկիայից: Բուրդերը իրանական ծագում ունին (Պարսիկների, Աւղանների, Բելուքների հետ մի ընտանիք կազմելով), Մարդագիտական տեսակէտից նայելով, նոցա ցեղը այլևայլութիւններ է ներկայացնում, որ իրանց բաղ-